

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԿԵ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք Օ Ն № 253.

Կիսագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(յայտի կիրակի և տոն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԵՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ միջոցով.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրկն-
նութիւնը աւելորդ չէ. Նամակ Փօթիկից. Ներ-
քին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՔԻՆ ՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ
ԿԱՆ. Մեր պատասխանը.

ԻՐՆՉ ՄԻՋՈՑՈՎ

Մի քանի ժամանակ արանից առաջ իշ-
խան Զանգիերի յարուցել էր մի կարեւոր
հարց Տողային սեփականութեան մասին:
Այդ հարցով զբաղվելու երեք հիմնարկու-
թիւններ կոմիտեան Գիւղատնտեսական
ընկերութիւնը, նահանգական այն կոմի-
տէն, որ կազմված էր տեղական կարիք-
ները ուսումնասիրելու համար և վերջա-
պէս կոմիտեան իրաւաբանական ընկե-
րութիւնը:

Իշխան Զանգիերի առաջարկութիւնը
հետեւեալն էր. Տողային սեփականութիւնը
կոմիտեան գէտ չէ որոշվել ձիւղ և ան-
վիճելի կերպով երկրի բոլոր մասերում:
Այն օր մենք կանաւատն ենք զանազան
ընդհարումների, որոնք առաջ են գալիս
Տողային եւ Տողից օգտվողների մէջ
այն պատճառով, որ իւրաքանչիւր իրն է
համարում վիճելի հողը: Ի՞նչ անել
թողնել որ վեճը չարունակվի մինչև որ
նա ժամանակով որոշվի և ձեւակերպվի
գաղափարական և հողափախան կար-
գով անկարելի է, որովհետև հողը պա-
հանգում է մշակութիւն և կառավարչու-
թիւն: Պէտք է օգնել կարելի չափ ա-
րագ և անվիճապէս: Իր կողմից իշխան
Զանգիերի առաջարկում է արտօնութիւն
տալ տեղական ոստիկանական վարչու-
թեան, որ նա ներգործական գեր վերջին
իր վրա և համաձայն պայմանների վերա-
կանգնել սեփականութեան իրաւունքները:
Անկասկած, դա աւելի հեշտ և մեքա-
նոր միջոց է միջամտելու Տողային վեճերի
մէջ և յայտնի որոշում կայացնելու: Սա-
կայն այդ միջոցով հարցը չի լուծվի և կը

ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«Бакинскія Извѣстія» լրագրի № 44-ի
մէջ Բ. Կ. տառերի տակ թագնված մի պարոն
տպագրել է մի յօդուած՝ «Մի քանի խօսք «Մը-
շակի» մասին վերագրով: Մենք կը պատաս-
խանեք այդ պարոնին:

Բայց նախ մի համառօտ ընդհանուր ակ-
նարկ:

Կոմիտեան ուսումնական վերջին տարի-
ներս շատ է զբաղվում հայոց մամուլով և գրա-
կանութեամբ: Երկու թիւ քաղի ինքն ըստ ին-
քեան ուրախալի լինելու՝ բնական էլ է իբրեւ
հանգամանքների պահանջ: Մեր երկրի ուսում
ընդհանուր ունեն բազմաթիւ հայ աշխատա-
կիցներ. չափազանցութիւն չի լինի, եթէ ա-
սենք, որ վերջին տասնամեակի ընթացքում մեր
երիտասարդութեան այն մասը, որ վերջացնելով
բարձր ուսումը, գրեւթ ընդունակութիւն և
պահանջ էր գգում, համարեա ամբողջովին դի-
մեց ուսում լրագրութեան, այնպէս էլ աշխա-
տում Թուս լրագրիւնների ընթերցողների եթէ
ոչ մեծագոյն, գոնէ խոշոր մասը հայերն են
կազմում: Եւ ահա այն երկու հանգամանքնե-
րը պահանջ են դարձնում հայ գրականութեան
մասին խօսել:

Մենք, ի հարկէ, մեծ ուշադրութեամբ ակնա-
նդ զրել թէ ինչ է տուում ուսումնական մեր
զրեւերի և պարբերական հրատարակութիւնների
մասին: Եւ տարիների ընթացքում եկել ենք

բացման նոր թիրիմացութիւնների և
ընդհարումների աղբիւրներ: Մի՞թէ չի
կան դէպքեր, որ մի և նոյն հողի համար
զանազան անձինք ունեն սեփականութեան
վաւերացրել են, մի՞թէ մեզ յայտնի չեն
դէպքեր, երբ պայմաններ բոլորովին չեն
համապատասխանում իրական կեանքին և
եղած սեփականութեան: Ի՞նչպէս կարելի
է առանց մանրամասն և հեղինակաւոր
ընկերութեան փոխել եղած գրութիւնը և
հողը տալ արան ու նրան, երբ դեռ վե-
ճերը չեն վերջացել գաղափարական կար-
գով:

Ինչո՞ր երեք հիմնարկութիւններն էլ,
որոնց մասին յիշեցինք, միաբերան մերժե-
ցին զեկոչյալնորի առաջարկը, համարելով
նրան աննպատակաւարմար և վտանգաւոր:
Սակայն իրականութիւնը պահանջում
է, որ մարդիկ չը բաւականանան միայն
մերժելով մի առաջարկ, այլ և իրանց
կողմից մշակեն մի նոր միջոց եղած կարի-
քին բաւարարութիւն տալու համար: Այդ
միջոցը կայ: Իսկ այն է, որ գաղափարա-
կան հիմնարկութիւնները մօտ լինեն ժո-
ղովրդին և բաւաւոր ու մայր հողի վրա
նստած գիւղատնտեսը կարող լինի դիմել
մերձակար գաղափարին: Եւ օգնութիւն
լինելու նրանց: Ուրիշ խօսքով անհրա-
ժեշտ է, որ աւելացվի հարաւարար գա-
ղափարների թիւը մեր գաղափար և
պարտաւորութիւն դրվի նրանց վրա, որ
սեփականութեան վերաբերեալ հարցերը
քննվեն անպաշտ և անվիճապէս:

Գաղափարների թիւը աւելացնելը կա-
րելի է և այն պատճառով, որ գաղափար
առհասարակ շատ աննպատակ վիճակի մէջ
է գտնվում գաղափարական գործը դա-
տարանների սակաւութեան և հետեւ լի-
նելու պատճառով: Իսկ արդարադատու-
թեան ամենամեծ և հիմնական պայման-
ներից մէկը այն պէտք է լինի, որ նա ե-
րեան գալ արագ, առանց ձգձգումների և
մեծ ծախքերի:

այն եզրակացութեան, որ ուսումնական չը
նայած հայ աշխատակիցների բոլոր աշխու-
թեան, բոլորովին լաւ չէ ճանաչում մեր գրա-
կանութիւնը և ընդունակ չէ մեր վերաբեր-
մամբ բաւականաչափ անկողնապահ, լաւա-
տեղեակ քննադատի դեր կատարել:

Մի պատճառներից մի քանիսը մեզ յայտնի
են մեր անձնական գիտողութիւններից: Գր-
կաւոր պակասութիւնն այն է, որ հայ գրա-
կանութեան մասին խօսողների մեծ մասը հիմ-
նաւորապէս ծանօթ չէ մեր գրականութեան
հարկաւոր է խոր, փաստալից ուսումնասի-
րութիւն, բազմակողմանի քննադատութիւն,
մենք դրա փոխարէն տեսնում ենք ընդհանուր
փրգներ: Մենք ճանաչում ենք այնպիսի գրող-
ներ, որոնք հեղինակաւոր դատողութիւններ
են անում մի օր և է հայերէն գրութեան լի-
զուի ու ոճի մասին, բայց իրանք այնքան հր-
մուտ են հայերէնագիտութեան մէջ, որ մեր
խմբագրութեան դիմելիս նամակներ են գրում
կամ ուղարկում կամ թէ այնպիսի հարկէնով, որ
սոսկում կը պատճառէր երկրորդ դատարանի
հայոց լեզուի ուսուցչին:

Յետոյ գալիս է այն, որ ուսուցչի մամուլի
մէջ մեր մասին գրողները պարտք են համա-
րում ազգաբարձար ներքոյնի յօդուած: Մեր
ինքնասիրութիւնը հաճելի կերպով շօյում է
այն հանգամանքը, որ մեզ միշտ գտնվում են
Բայց այդ անընդհատ գովասանքները, խոստո-
ւանքներ են, միշտ մի զրգր-մեղքը գզգզ-
մունք է պատճառում մեզ: Միշտ գովելի փա-
ռաքանի: Գնահատութիւն չէ դա, այլ քննա-
նդ մի դեղ, որ առաջադիւթեան խոչըն-
դում է: Գոհ ենք, որ «ԲԱԿ. ԻՅՎ.»-ի յօ-
դուածագիրը «Մշակի» վերաբերմամբ ուղղում

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՐԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԵՆՈՐԻ ԶԷ

Մի տեղ հանճարեղ ժամ-ժակ Բուսոս բա-
ցականում է. «Թէ որ տեսնէք ես մեռնում
եմ, դրէք ինձ կաշնու տակ և ես յարութիւն
կանենմ: Տրամադորէն հակառակ ազատու-
թեան համար մարտնչող մեծ փոխսօփային
բազումները կարող են ասել. «Երբեք Բացու-
ւածարտ», ազաւարական կեանք և գործու-
նէութիւն» բացականչողներին և նրանք կը
մեռնեն: Կը մեռնեն, ի հարկէ, հոգեպէս: Հայ
մամուլը, մասնաւորապէս «Մշակը», շատ է
զբաղվել այդ հոգեկան մահացութեամբ (ի մի-
ջի այլոց «Մշակ» № 186—1902 թ., Լէօ Վեր-
զրոյց): Բայց կրկնութիւնը աւելորդ չէ: Կան
հարցեր, որոնց առիթով պէտք է անվերջ ծե-
ծել, բաղնիք խուլ դռները և սրտերը: Այդպի-
սի մի հարց է նաև այն, որ Բացու-
ւածի ինքնութիւնը մահացած են հոգեպէս:

Եւ ահա այդ հարցի շուրջը պատող մի ֆե-
լիտոն է տպել իր № 43-ի մէջ «ԲԱԿ» թիւ-
թիւ «Բայալանտան» հեքիաթ» վերնագրով, մի
սրտմիտ ֆելիտոն: Պատմե՛ք համառօտակի
բովանդակութիւնը:

Կար չը կար մի ինտելիգենտ, նա, ինչպէս և
ուսումնական ինտելիտների մեծամասնութիւնը,
չուարած էր այդ ինտելիտների առաջ, իսկ այդ
«չուարածները» ուրիշները ընդունում էին իւր-
րեւ շուրջը և նա անվերջ էր անվերջ թափա-
ւել: Նա ընկաւ նոյն իսկ սպիտակ արջերի պո-
չերը ուսումնասիրելու համար, կազմված էին
պեղծիցիայի մէջ: Ինտելիգենտը ընկաւ վերջա-
պէս և Բացու-
ւած էին գրկաբաց: Առաջին անգամ նա կար-
ծես չուարած էր մեր իրականութեան առաջ.
«Ինչո՞ւ հիւսնադասնները ինչպէս են արիւ-
նանդ պատերազմի դաշտում վերակապի չու-
տափոյթ սարածը կէտեր, ինչո՞ւ ջանքեր տեղ
վառվում են նաւթահանները նաւթահանները
լուսաւորելու համար, ինչո՞ւ բանագործների ընա-
կարանները խօսում են քաղաքակրթութեան
նախկին ժամանակների մասին և այն և այլն»:

Բայց դա երկար չէ շարունակվում: Եւ ահա
փոքր առ փոքր մեր ինտելիգենտը հաշտվում է

է պակասութիւններ պարզող մի քննադատ լի-
նել: Ինչո՞ւ չէ, պակասութիւնների մասին էլ
լաւ է խօսել: «Մշակը» իր հիմնադրութեան
առաջին իսկ օրերից շատ անգամ կրկնել է,
թէ ինքը հրաշքներ գործող չէ պիտի լինի, քա-
նի որ հրաշքների գործը վաղուց են անցել,
այլ լոկ մի աշխատատեղ: Այնպէս, ան-
խնայ կերպով աշխատելու է այժմ փոխարի-
նում «հրաշք» բառը: Մենք կարող ենք յայտնի
սխալել. մենք երբեք չենք էլ ընդունել մար-
դու անսխալականութիւնը: Սխալվելը յան-
ցանք չէ, անսխալականութիւն չէ, երբ մամուլի մի
օրգանը նոյն իսկ սխալների մէջ էլ աշխու է,
չիտակ է, չէ դաւաճանում իր հիմնական սկզբ-
բունքներին: Թող ցոյց տան մեզ մեր սխա-
լները, հակասութիւնները, թուլութիւնները:
Դրանից ի՞նչ վնաս: Մտքերի փոխանակութիւ-
նը, փաստական, հիմնաւոր քննադատութիւնը
այն կենդանացող տարրն է, որ միայն բարիք
կարող է առաջացնել:

Այսպիսի համոզմունքով մենք դիմում ենք
մեր քննադատ պ. Բ. Կ.—ին: Կարծում ենք նրա
յօդուածը ծայրի ի ծայր, որոնում ենք փա-
տեր, բայց տեսնում ենք դատարկ ֆրազներ,
որոնում ենք բազմակողմանի ծանօթութիւն
առարկայի հետ, գտնում ենք դէսից-դէսից
վերցրած ասեկօսեկներ: Որոնում ենք բարեխղ-
ճութիւն, այդ էլ դժբաղդաբար չենք գտնում:
Եւ վերջ ի վերջոյ գալիս ենք այն եզրակա-
նութեան, որ ուսումնական յօդուածը մի
բեկոր է այն ամբողջ անատամ յարձակումնե-
րից, որոնք տպվում էին հայոց մամուլի մէջ
«Մշակի» հիմնարկութեան առաջին օրերից
սկսած:

Մենք կը բերենք մի չարք ապացոյցներ:

միջավայրի հետ: Եւ ինչպիսի իդէալիստի նման
«փոքրիկ ստորութիւններ է գործում և նրա
համար այժմ «ինչ գոյութիւն ունի—նա լաւ է»:
Նա մոռացել է և ֆրանսիական պարլամենտը,
և գերմանական լայնատեղ, «էտիկա», «ազա-
տութիւն», «քաղաքակրթութիւն» բառերի տեղ՝
նա միայն գործ է ածում «բուրգ», «գոյր»,
«նաւթ քաշել»:

Կանաչ սեղանից զատ նա իր չըջանում ուրիշ
պարագաներ, գրաւորութիւններ չունի, իսկ զը-
րոյցը այդ չըջանում անհամ է, ծեծված, բա-
նար: Նա միայն նաւթի շուրջն է պտտում
Օրինակ:

—«Մեր № 00 բուրգը ցեխ է տալիս: Գործը
շատ է ետման»:

—Իսկ շատ է տալիս:

—Հինգ հազար...

—Չոք ետման...

Մեր ինտելիգենտը նեղում է գտնում նա այդ
չըջանից էլ է զգացում: Մենակ է այժմ: Մեքե-
նայի պէս ուսումն է և ամբողջ օրը թափա-
ռում նաւթահաններ: Երեսը մի անգամ ան-
լուայ թողնելով՝ այնուհետև այլ ևս չէ լուսա-
վում: Դէմքը սևացել է, բրդափայլ է գուրկ է
որ և է արտայայտութիւնից, նա միայն կեն-
դանաւում է ճաշի ժամանակ: Եւ օրերը ա-
հում էին: Փոխվում էին և այրվում բուրգերը,
այրվում էին և անդամաւոր դառնում բա-
նարները, գետնի խորքերից անընդհատ թափ-
վում էր մայրութիւն, իսկ բալանանան ինտե-
լիգենտը աւելի և աւելի էր անկենդանանում:
Վաղուց է նա մոռացել տպագրութեան գիւտի
և եւրօպական քաղաքակրթութեան ուրիշ լա-
րիքների մասին: Եւ մի անգամ, գտնելով դիպ-
վածով մի կտոր ապագան, նա երկար պահում
էր իր ափում, աշխատելով մի ինչ որ բան
մտաբերել: Յետոյ հոստոնց և... կերակ: Ապա
նա քնաց դէպի բուրգը, նստեց նաւթահանի
մօտ և ձայնակցեց նրան:

Ա.—յա՛հ—յա՛հ—յա՛հ:

Սա ըստ «ԲԱԿ»-ի մի «գաղտն» հեքիաթ է,
բայց մենք աւելացնում ենք որպէս փաստ, որ
մի ինժեներ երկար գրեց «պառ» մնալուց յե-
տոյ, օգտվելով այն ֆիրմայում, որտեղ ինքը
կառավարել էր, միակ ծառայողի բացակայու-
թիւնից, ստանում է պօստի ցրիչից ծառայողի

Մեր քննադատը գտնում է, որ «Մշակ»
վերջին տարիներում նոր բան չէ մտքել
մեր կեանքի մէջ, նոր հարցեր չէ յա-
րուցել և այլն: Բարեխղճ քննող մի լրագրի
մասին խօսելիս նկատի կունենար մի շարք
հանգամանքներ: Նա կը համարուէր այդ լրա-
գիրը մի և նոյն տեղում, մի և նոյն պայման-
ների մէջ հրատարակվող ուրիշ լրագրիների
հետ և ամենից առաջ հարց կը տար.—կայ
հրատարակութիւն, կայ նպատակաւոր միջոցներ,
կարող է ուրիշ կերպ լինել: Այս հարցերը շատ
հեշտ կը լինէր պարզել: Դրա համար հարկա-
ւոր կը լինէր ուսումնասիրել տեղական (Թիֆ-
լիսի) մամուլը և ասել, ահա, պարոններ, այս
ինչ լրագիրը կարողացել է այսպիսի մի նոր,
դեռ բոլորովին չը տեսնված հարց ստեղծել,
այս ինչ նոր հոսանքը մտքել կ'անքի մէջ,
իսկ «Մշակը» չէ կարողացել, որովհետև նա
յետմնաց է, անզգայ է դարձել: Կարելի չէ,
պ. Կ., որ դուք մի քանի փաստեր ցոյց տաք:
Մի կարծէք, թէ մենք չարախնդրացութեամբ
ենք առաջարկում այս հարցը ձեզ: Ո՛չ, ցաւ է
սա մեզ համար և դուք, եթէ հասկանալու կա-
րողութիւն ունիք, կը հասկանաք թէ ինչ ենք
ասում ձեզ:

Այս մէկ նոր հարցերի, նոր հոսանքների մա-
սին: Հիմա իմանա՞ք թէ ինչ է պ. Կ.—ի համար
նորը: Ահա պարոնը մեզ մեղադրում է որ մենք
Արժրոնու գաղափարներին ենք հետեւում: Ո՛ր-
պիսի յետմնացութիւն, որպիսի յանցանք: Սա-
կայն գուցէ միայն պ. յօդուածագիրը համար է
գաղափարներ ստեղծել. Արժրոնին աշակեր-
տել էր համամարդկային գաղափարներին և
նրանց տաղանդաւոր քարոզիչն էր:

ամսագիր «Журналъ для всѣхъ»-ը և ինտելիգենտի սպանի պէս զարմանում, որ այնպիսի հումանայտիքի «բաներ» կան Մի ամսից յետոյ, ամսագիրը ծայրէ ի ծայր կարդալուց յետոյ, «ուսումնասիրած» ինքիները վերադարձնում է նրան իր տիրոջը, իսկ ինքը նորից ընկզմալով ամս ներկայանան, որից հանել էր լրարկի գրքովը Աննա Զոնա...

Ուշի ուշով կարդացէ՛ք, ընթերցող, ֆելիէ-տունի առաջին տողերը, սպիտակ արջերի մասին կազմված էկապեղիցիան, յիշեցէ՛ք ֆելիէ-տունի վերջը և երևակայեցէ՛ք մեր բարբերը, Լճացած կենսի արդիւնք է այդ ինտելիգենտը, մի կենսի, որտեղ չը կան գոռոց, մաքրող հովեր, բողբոջ, յուզմունք լաւի համար... Եղած «կայծերն» էլ մենք մարում ենք մեր անտարբերութեան ծովումս

Իսկ այսուհետեւ ինչ որ ասեն Բագու-Բալասանի բնակիչները, մանաւանդ զիպլոսաւորները մասին, հէքիաթ չը կարծէք, ընթերցող Դ. Տէր-Խանկիւան

Բ ա գ ու

ՆԱԽԱՓՈԹԻՑ

Փետրվարի 21-ին

Անդեալ տարվայ ղեկավարների 20-ին մենք յայտնեցինք, որ Փոթիում տեղի ունեցաւ սուլտանական աւագակութիւններից մէկը՝ արքունի գանձարանի կողպատում և 30,000 ռուբլի տանելու Հիմա էլ, դժբախտաբար, ամսին 20-ին, չարագործները կրկին փորձեցին կողպատել պոստ-հետադարձութեանը, բայց այդ նրանց չափովից:

Աւագակները, չորս հոգի, լաւ զինված, գուրդաբանների հազոտ ստով, առաւօտեան ժամը 5-ին ներս են խուժում սենեակը և փորձում փողի պահեստի երկաթէ դուռը կտրելու Այդ ժամանակ հեռագրատանը լրկում է չինոյի Ռաւիդովը և ծանուց. Պ. Դաւիդովը, տեսնելով բանը ինչուսն է, առանց չիփռվելու վերցնում է ատրճանակը և սկսում դէպի աւագակները արձակել: Չարագործները երբ տեսնում են, որ դուռը կտրելը ժամանակ է պահանջում, իսկ ատրճանակի ձայնից կարող են հաւաքվել մարդիկ, սկսում են հեռանալ, այդ ժամանակ պ. Դաւիդովը ատրճանակ զցելով, դրանց հետևում է, բայց աւագակներից մէկը հրացանի մի գնդակով վիրաւորում է պ. Դաւիդովին ոտիցը: Վէրքը այնքան էլ ծանր չէ:

Ինչպէս երևում է, այդ օրը պոստատանը ստացված է լրկում 60,000 ռ. աւել փող: Պէտք է ենթադրել, որ չարագործները այդ գիտէին: Յուսով ենք, որ գոնէ այսուհետեւ իշխանութիւնը ուղարկութիւն կը դարձնէ այն յաճախակի աւագակութիւնների վրա, որոնք տեղի են ունենում մեզանումս:

Այ. Վրթանէսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց թեմական ուսումնարանական խորհուրդը վերջին ժամանակ բաց է արել Անդր-կովկասի ուսական գիւղերում 12 եկեղեցական-ծխական ուսումնարաններ, իսկ անցեալ տարվայ ընթացքում բացված նոր ուսումնարանների թիւը հասնում է 70-ի:

Երկուշաբթի, փետրվարի 24-ին, Քիֆիսի արտիստական թատրոնում տեղի ունեցաւ նոր օպերային խմբի առաջին ներկայացումը խաղացին «Կարմեն» օպերան, որտեղ Կարմենի դերը կատարում էր Քիֆիսում յայտնի և յարգված դերասանուհի Ինսարովա Օպերային տեսարանները կազմված էին բաւական ճշիւ: Խորը ստույգ չէ, բայց աղող է. փոքր ինչ կաղում էր մանուկների խմբերը: Ինսարովա դարձեալ ապացուցեց, որ նա շատ գեղեցիկ խաղալ գիտէ և ճաշակով երգում է: Նրա ձայնի ուժը փոքր ինչ թոյլ էր երևում օպերայի սկզբում, բայց վերջում նա ստացաւ իր իսկական արտայայտութիւնը: Դոն-Պաշէի դերը կատարում էր Սալոս, Դորեադորինը Պիսաձոնի, Միքայէլայի դերը Արցքբաշիվա, որոնք երգում էին ներկայ ձմերվայ ընթացքում վրաց ազնուականութեան թատրոնի բեմի վրա: Ներկայացումը ընդհանրապէս նպաստուոր տպաւորութիւն թողեց: Թատրոնի պարտերը և վերապատումը լինէ են, իսկ օժեհակները միայն մասամբ: Թատրոնի ախուտիկան դոնացուցիչ է:

Փոթիում, պոստ-հետադարձական գրասենեակի վրա տեղի ունեցած յարձակման մասին «Вѣст. Вѣст.» լրագիրը հաղորդում է հետեւեալ մանրամասնութիւնները: «Ուրբաթ, փետրվարի 21-ին, առաւօտեան ժամի 4 1/2-ին, զաւթի կողմից, պատուհանի կտրած ապակու տեղով, պոստ-հետադարձական գրասենեակը մտան երեք զինուորական չարագործներ: Լսելով աղմուկ, հեռագրատան հերթապահ ծառայող Դաւիդով մտաւ ընդունարանին կից սենեակը և հանդիպելով աւագակներից մէկին՝ ատրճանակ արձակեց, բայց գնդակը վրիպեց նպատակից: Դրանից յետոյ ատրճանակ արձակեց աւագակը և վիրաւորեց Դաւիդովի ոտը: Միւս երկու չարագործները աշխատում էին կտրել դրամի պահեստի երկաթե դուռը: Ատրճանակների արձակման ձայնից իսկոյն զարթեցին հեռագրատան միւս ծառայողներն ևս և սկսեցին իրանք ևս ատրճանակներ արձակել: Չարագործները, տեսնելով որ կողպատումը չէ ալողվում, հեռացան գրասենեակից: Յարձակման տեղը եկաւ շուտով Բոթիայիսի նախագահատեղի և զատաւանական իշխանութիւնները: Նրանց ձեռք առած միջոցները՝ գտնելու յանդուգն չարագործներին՝ մինչև այժմ անհետանք են մնացել:

Քիֆիսի քաղաքային վարչութիւնը, համա-

բախտը, իր ապագան Հնացած է օսել Ժողովրդական—ընտրողական սկզբունքը: Հնացած է Հասարակական գաղափարների արժանոք գեղարուեստ: Հնացած է Կոլ Կոտաբայ հաւասարութիւն: Հնացած: Ազատ խօսքի անհրաժեշտութիւն: Հնացած: Նիւթապաշտ, անբարոյականացած: Ինտելիգենցիա: Հնացած: Երկրագործութիւն, գիւղատնտեսութիւն, գործարանական կենսութիւն, պրօլետարիատի մասին հոգատարութիւն: Հնացած, ամեն ինչ հնարած: Իսկ ինչն է նորը: Նորը հէց ինքը, պ. Կ.Ն. է իր ֆրագներով:

Եւ այդ նորը այնքան ինքնավատան է, որ բարբառում է հեղինակաւոր կերպով. «Ինչ միտ օտարոտի է թւում շատ լրագիրների խորհուրդները յօդերանունների ժամանակ այն մասին, թէ իրանք մտալ չափ չեն չեղվել սկզբից ծրագրած պրօգրամից: Ինչպէս կարելի է, ասում է պ. ընտաղատը,—կենսաբ փոխվում է, նոր հարցեր, նոր պահանջներ են ծնվում, իսկ դուք պարծնում էք, որ միշտ հաւատարիմ էք եղել ձեր ուղղութեան:

Շատ զարմանալի է որ մի այսպիսի անհեթեթութիւն լինի առանց վերապահումների, առանց բացատրութեան տալված է մի առաջադիմական լրագրի մէջ, որ ունի որոշ սկզբունքներ, որոշ դաւանութիւն: Մենք չենք կասկածում, որ «Вѣст. Вѣст.» աւելի լաւ կը համարէ մեռնել, քան թէ փոխվել հանգամանքների հետ, դառնալ պրօլետարիատի հետ: Եւ ասանկ ալ, նախ աղ: Ինչ սկանդալ Մեր ընտաղատը չը գիտէ դեռ, որ երբ մի լրագիր իր համար ղեկավարող սկզբունք է ընդունում առաջադիմութիւնը, հետո, զարգացումը, նա պիտի գնալ կենսաբ հետ, պիտի յետ չը մնայ նորանոր

ձայն ոստիկանապետի ներկայացրած ծրագրի, կազմել է մի ղեկուցում Քիֆիսի հրդեհաշէջների խումբը հիմնական փոփոխութեան ենթարկելու մասին: Զեկուցումը շուտով կը ներկայացնվի քաղաքային դռնային քննութեան:

Երկրագործութեան և պետական կալուածների միմիատրութիւնը մտադիր է հիմնել մի միջնակարգ ուսումնարան՝ «Կուլտուր-տեխնիկ»-ների ուսումնարան» անունով, որի մէջ նախապատրաստվէին գիւղատնտեսութեան բնական պայմանները բարւոքող մասնագետներ, այնպէս որ նրանք լաւ տեղեակ լինէին աւալի դաշտերը ջրարբի դարձնելու, ձահիճները չորացնելու և արհեստական անտառներ դարձնելու գործերին: Այդ ուսումնարանի հիմնարկութիւնը միանուագ կը պահանջէ պետական գանձարանից 300,000 ռուբլի, իսկ տարեկան 45,000 ռուբլի:

Ուսուցիչ Տէր-Դաւթեանի. ընտանիքի օգտին ստացանք բժշկապետ Գապարեանից—10 ռուբլի, Համբարձում Թորոսեանից 5 ռուբլի և պ. Երանդեանից 14 ռուբլի, որ նա ժողովել է հետեւեալ անձերից. Գ. Միքայէլեանց 1 ռուբլի, Ա. Մարտիրոսեան 50 կ., Բ. Նաւակեան 50 կ., Ի. Թարխանիշվիլի 50 կ., Ս. Բուկիա 50 կ., Ա. Շամուգիա 50 կ., Մ. Երանդեան 1 ռուբլի, Ա. Ներսիսեան 50 կոպէկ, Պ. Երանդեան 3 ռ., Գ. Երանդեան 1 ռ., Ե. Երանդեան 1 ռ., և մի ոմն 4 ռ., իսկ նախկին ստացվածների հետ միասին երեսուն ռուբլի:

Ստացանք Շահաբեանի օգտին Պետրոս Երանդեանից 1 ռուբլի, Մ. Երանդեանից 50 կոպէկ: Նոյն անձերից ստացանք Բաթիսի օր օգտին 1 ռուբլի 50 կոպէկ:

ԱՅՈՒՄԱՆԱԿԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 13-ին Վարդանանց յիշատակը մեր եկեղեցում տօնվեց շատ փառանկ կերպով: Նախկին գործակալ Ընձակ վարդապետը, որ ժողովրդի թախանձագին խնդրին զիջելով՝ մեր քաղաքում հիւր էր մնացել յատկապէս այսօրվայ տօնի համար, երկու անգամ ոգևորված քարոզ խօսեց—սկիզբը բեմից և ապա հոգեհանգիստը կատարելու ժամանակ, երկու անգամ էլ խոր պատարութիւն թողնելով բազմաթիւ ունկնդիրների վրա, որոնք բոլոր խառնութիւնները փակել և շտապել էին ծայր է ի ծայր լցնել ընդարձակ սառնար: Գարդնների նիւթն էր Վարդանանց տօնի նշանակութիւնը, մեր ներկայ հոտարկութեան պարտականութիւնները և արատները: Երկրորդը պ. Յ. Տոնապետեանի իր խելացի ճառով նոյնպէս գեղեցիկ տպաւորութիւն արաւ: Վերջը, երբ քարոզիչ վարդապետը ուզում էր դուրս գնալ եկեղեցուց, քաղաքագլուխ պ. Ա. Գրիգորեան մի զգացված և հակիրճ ճառով շնորհակալութիւն յայտնելով հայր Ընձակին՝ նրա պաշտօնավարութեան ժա-

պահանջներին և պիտի վերաբերվի այդ նոր երեւոյթներին: Երկուսն էլ, քանի որ հայեցակէտներն են թեկադրում Պ. Միխայլովիչին չէ ընդունում մարքսիստների թէօրիաները: Նշանակում է դա, թէ պ. Միխայլովիչն յետադէմ է, տաղտկալի է:—Ի հարկէ ոչ, Միխայլովիչն հաւատարիմ մնալով վաթսուսական թւականների ուսուց լիբերալիզմի լաւագոյն աւանդութիւններին, մնում է այժմ էլ առաջաւոր, փայլուն գրող սուսների մէջ: Յետոյ պ. Կ.Ն. զարմանալի լօգիկայով դուրս է գալիս որ Ռուսաստանի մէջ այժմ ամենավատ ամսագիրը «Вѣстникъ Европы»-ն է, քանի որ նա 1866 թ-ից մինչև այսօր մաղի չափ չէ չեղվել իր ուղղութիւնից:

Ան ողբան զարմանալի դատողութեան տէր է եղել մեր ընտաղատը: Նա ասում է, թէ «Մշակը» վախկոտ է: Բայց պէտք է ասել, թէ ով է «Մշակից» աւելի համարձակը: Որ «Մշակը» համարձակ է որքան թոյլ են տալիս հանգամանքները (լաւ կարացե՛ք այս բառերը), այդ ձեզ ցոյց կը տան մի չարք դատաստաններ գործեր, որոնք զիջատագիտի կարգով յարուցված են նրա խմբագրի դէմ: Երանդեան մի քանի անգամ էլ շարունակվում են: Ուզում էք ուրիշ փաստեր: Մենք ձեզ կը տանք նախակներ, որոնց մէջ դուք կը կարգեք զէնքով մեզ հետ գործ տեսնելու սպանալիքներ:

Զէ հատկանում պ. ընտաղատը, թէ ինչու «Մշակը» անուանվում է ազատամիտ նա չէ գտնում մի հարց, մի դէպք, ուր «Մշակը» արժանի լինէր այդ անունին: Կայ միայն մի բան— որ «Մշակը» Կովկասեան բոլոր ազգերի կուլտուրական խաղաղ զարգացման կողմնակից է:

մանակ խօսած ոգեշունչ քարոզների համար՝ մի գեղեցիկ արծաթագլուխ գաւազան մատուցեց նրան, որ այստեղի երախտագէտ հայ հասարակութիւնը վաղօրօք պատրաստել էր տուել այս նպատակի համար: Ընձակ վարդապետը զգացված շնորհակալութիւն յայտնեց Ախալքալաքի ժողովրդին և հրաժեշտի ողջոյն տուեց հասարակութեանը, որը արտասովոր բաժանվեց իր սիրելի քարոզիչից:

ԱՅՈՒՄԱՆԱԿԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 11-ին, ձմերային կուռքի դաժնիւմ, տեղական հայ թատերադէսների խումբը տուեց, ի յիշատակ դերասան պ. Աղամեանի մահվան X-ամեայ յիշատակին, մի ներկայացում, յօգուտ նոր բացվելիք բուժարանի: Ներկայացման ժամանակ դահլիճում կախված էր Աղամեանի մեծագիշի պատկերը, որը զարգարված էր կենդանի կանաչներով, իսկ պատկերի տակ կախված էր մի տպագրված թերթ, հետեւեալ խօսքերով՝ «Հնչակաւոր դերասան պ. Պ. Աղամեանի մահվան X-ամեայ յիշատակին, 1849—1891 թ.»:

Նախ քան ներկայացումը սկսելը, սիրողները կատարեցին Աղամեանի յիշատակին նուիրված հանդէսը: Բեմը ներկայացնում էր պարտէզ, որտեղ երկու սեռի սիրողները շարքով կանգնած էին, որը ժամանակակից և որն էլ հայոց պատմական շորերով: Այս միջոցին սիրողներից պ. Սո. Աղամեանները կարգաւ Պ. Աղամեանի կենսագրութիւնը: Այդ տեսարանից յետոյ ցոյց դրվեց կենդանի պատկեր—Աղամեանը նստած բազկաթոռի վրա, իսկ կողքերին և առաջը կանգնած և նստած են սիրողները, այն ժամանակ օրիորդ Պետրոսեանը, սիրողների անունից մի պսակ դրեց Աղամեանի գլխին: Հանդիսականները բուռն ծափահարութեամբ յայտնեցին իրանց ոգևորութիւնը: պատկերը ժողովրդի պահանջով կրկնվեց մի քանի անգամ: Ապա սկսվեց ներկայացումը: Խաղացին «Արշակ Բ.» պատմական ողբերգութիւնը, հեղ. Գալֆայանի: Ներկայացումը բաւական լաւ անցաւ. բոլոր դերակատարները, շատ քիչ բացառութեամբ, լաւ էին իրանց դերերում: Ներկայացման ժամանակ եղած հարկաւոր երգերը քառամասն երգում էին ս. Փրկիչ եկեղեցու նորակազմ երկուս խումբը: Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր հանդիսականներից: Մուտքը եղաւ մինչև 220 ռուբլի, իսկ ծախս մօտ 80 ռուբլի: Մեր թատերադէսները մտադիր էին յաճախ ներկայացումներ տալ, սակայն այս տարի, մինչև այսօր, հազուա մի երկու ներկայացում են ալողեցրել: Դրա գլխաւոր պատճառը, ինչպէս լսեցինք, կանանց զերակատարների չը լինին է: Արդեօք Յոր պէտք է հասկանան մեր փափկասուն տիկիները և օրիորդները, որ բեմին և հասարակական գործերին ծառայել ոչ թէ ամբթ է և նախապէք, այլ պատիւ և ազնիւ գործ: Հէց կանացի դերակատարներ չը լինեն էր պատճառ, որ սիրողները ստիպված են «Արշակ Բ.»-ի և արա

Բայց ով չէ այժմ ազատամիտ այդ ուղղութեամբ, հարցնում է յօդաւածագիրը: Չարմա-նալի է, որ պ. Կ.—ի այս խօսքերը յիշեցնում են մի ուրիշ Կ.—ի նոյն այսպիսի գատողութիւնը: «Մշակը»—ասում էր այս վերջինը—կուռն է վախատութեան դէմ, բայց ով է պաշտպանում վախատութեանը: Այսպէս է եղել միշտ: «Մշակը» կուռն է կոռնական ֆանատիկոսութեան դէմ, բայց ով է եղել ֆանատիկոսութեան պաշտպան: «Մշակը» կուռն է կղերական կատալիսականութեան, աստուածաբանական եզրուիտութեան դէմ, բայց ով է եղել դրանց կողմնակիցը: «Մշակը» ամբողջ տարիներ կատաղի պաշար է մղել ժողովրդական ազատ ջուրէ, դպրոցական և եկեղեցական ինքնավարութեան համար, բայց ով է ասել թէ այդպէս պիտի չը լինի «Մշակը» պահանջել է հաշտութեան, պահանջել է եկեղեցու գրգռութեանը, որ բեմին և հասարակական գործերին ծառայել ոչ թէ ամբթ է և նախապէք, այլ պատիւ և ազնիւ գործ: Հէց կանացի դերակատարներ չը լինեն էր պատճառ, որ սիրողները ստիպված են «Արշակ Բ.»-ի և արա

Այնքան պ. Կ.—ի տնտեսութեան պտուղներն են: Բայց կայ նրա մէջ և աւելի վատ գիծ—անբարեխղճութիւն: Նա ասում է, թէ «Մշակը» այդքան հասցել է, ընկել է և դեռ պրոտեստիւն ունի, որ հայերը չեն սիրում իրանց մայրենի

Электронпечатная Груз. Ид. Т-ва, В.-Ваниская ул